1 (21) 2010

*ՀՏԴ 941 (479.25)*

*Պատմություն*

# ԻՇԽԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՍԿԻԶԲԸ ԼՂՀ-ում (1991 թ. սեպտեմբեր – 1992 թ. հունվար)

*Տ.Վ. Հակոբյան*

Մինչև Լեռնային Ղարաբաղի հանրապետության (ԼՂՀ) հռչակումը և Գերագույն խորհուրդ (ԳԽ) ընտրությունները ԼՂ-ում պահպանվում ու գործում էին խորհրդային իշխանության բոլոր մակարդակների մարմինները: Սակայն, նրանց գործունեությունը թեև հիմնված էր ԽՍՀՄ օրենքների վրա, այնուամենայնիվ, ամբողջովին ենթարկեցված էր Ադրբեջանի կազմից դուրս գալու և ինքնուրույն պետականություն ստեղծելու նպատակները հետապնդող համաժողովրդական շարժման խնդիրներին: Դրանք, հատկապես Շարժման առջև կանգնած ռազմական ու դիվանագիտական բնույթի հարցերի լուծման գործում ժողպատգամավորների մարզային խորհուրդն ու նրա գործկոմը, ոչ միայն ցուցաբերում էին մեծ ակտիվություն, այլև դարձել էին բոլոր գործողությունների օրինական, իրավական հիմքերի մշակման կենտրոն: Սակայն մարզում ստեղծված իրադրությամբ և նրա զարգացման ընթացքով թելադրված հիմնախնդիրները լուծելու գործում մարզգործկոմի ղեկավարության կողմից ցուցաբերվող զգալի երկչոտությունը պահանջում էր ամրապնդել մարզի ղեկավարությունը: Հենց այդ նպատակն էր հետապնդում մարզային խորհրդի գործկոմի 1991թ. հունիսի 11-ի ընդլայնված նիստը, որին մասնակցում էին ձեռնարկությունների և կազմակերպությունների ղեկավարները, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի (ԼՂԻՄ) շրջգործկոմների նախագահները: Քննարկելով մարզում ստեղծված աղետալի վիճակը՝ ակտիվը որոշեց ձեռնարկել կազմակերպչական անհետաձգելի միջոցներ՝ ընդունելով մարզգործկոմի նախագահ Ս. Բաբայանի հրաժարականը: Նախագահի պարտականությունների կատարումը դրվեց նրա առաջին տեղակալ Լ. Պետրոսյանի վրա[1]:

ԼՂՀ-ի հռչակման մասին 1991թ. սեպտեմբերի 2-ին ընդունված Հռչակագրում ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհուրդն ու նրա գործկոմը ճանաչվեցին որպես ԼՂՀ պետական իշխանության և կառավարման ժամանակավոր բարձրագույն մարմին՝ մինչև համաժողովրդական ընտրությունների անցկացումը, իշխանության ու կառավարման հանրապետական մարմինների ձևավորումը[2]:

Սակայն, Արցախի պետականության հիմքերը դնելու համար հույժ կարևոր այս գործընթացներին արագացնելուն խոչընդոտում էին ԽՍՀՄ-ի լուծարման նախաշեմին երկրում ստեղծված խառնաշփոթ, կատարելապես անորոշ իրավիճակը և օրեցօր սաստկացող ադրբեջանական ագրեսիան: Միջազգային հարաբերությունների այս նոր պայմաններում, ժամանակի քաղաքական պահանջներին համապատասխան՝ Ռուսաստանի և Ղազախստանի նախագահները ստանձնեցին միջնորդի դերը ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում[3]: Դա էլ հենց կարելի է համարել առաջին տևական միջնորդությունը:

1991թ. սեպտեմբերի 22-ին Ստեփանակերտ ժամանեցին Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) և Ղազախստանի նախագահներ Բ. Ելցինը և Ն. Նազարբաևը: Նրանց ուղեկցում էր Ադրբեջանի նախագահ Ա. Մութալիբովը: Ստեփանակերտ կատարած այցից հետո՝ սեպտեմբերի 23-ին Ժելեզնովոդսկում նրանց հովանու ներքո կայացան բանակցությունները Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարների միջև, որոնց արդյունքում ընդունվեց համատեղ կոմյունիկե[4]:

Սակայն այն չհանգեցրեց ԼՂ-ի իրավիճակի բարելավմանը: Ընդհակառակը, ադրբեջանական կողմը կտրուկ սաստկացրեց հրետակոծումները և հայկական բնակավայրերի վրա կատարվող հարձակումները, որոնք բազմաթիվ զոհերի և ավերածությունների պատճառ դարձան:

Հոկտեմբերի 15-ին Ժելեզնովոդսկի փաստաթղթի կատարման ընթացքին ծանոթանալու համար Բաքու ժամանեցին Ռուսաստանի և Ղազախստանի նախագահների ներկայացուցիչները: Նրանց ընդունելով՝ Ադրբեջանի նախագահ Ա. Մութալիբովը հայտարարեց, թե ԼՂ-ի հարցը իրավազոր է լուծելու միայն Ադրբեջանը, և ոչ ոք չպետք է միջամտի նրա ներքին

գործերին: Մինչդեռ՝ Բաքվում ամեն օր տեղի էին ունենում Ադրբեջանի ժողովրդական ճակ
հակահայկական հանրահավաքներ, որտեղ Ղարաբաղը նվաճելու նպատակով կանոնա
բանակ ստեղծելու կոչեր էին հնչում[5]:

Այսպիսով, Ժելեզնովոդսկում ձեռք բերված համաձայնությունները և հրապարակ
կոմյունիկեն չնպաստեցին տարածաշրջանում իրադրության կայունացմանը, և նշանակ
դառնում վերահաս լայնամասշտաբ պատերազմի ուրվականը:

Ազատագրական շարժման ղեկավարների առջև հրատապ խնդիր դրվեց ստ
պատերազմական իրավիճակին համապատասխան իշխանություն և առաջին հերթ
կանոնավոր բանակ:

Ստեղծված իրավիճակից ելնելով, 1991թ. հոկտեմբերի 28-ին Ստեփանակերտ
հրավիրվեց արտադրական ձեռնարկությունների տնօրենների խորհուրդ՝ Ա. Մանուչ
գլխավորությամբ: Նիստին մասնակցում էին հանրապետության ղեկավար կազմը և շրջան
ներկայացուցիչները: Տնօրենների խորհուրդը հանրապետության ղեկավարների առաջ հարցը
ստեղծել ԼՂՀ պաշտպանության խորհուրդ և բոլոր զինված ջոկատները միավորել հայրե
պաշտպանելու համար[6]:

Հոկտեմբերի երկրորդ կեսից հանրապետությունում զինված ընդհարումները
հաճախակի էին դարձել: Թշնամու հարձակումներին դիմակայելու նպատակով, գյուղե
կազմավորվող ինքնապաշտպանական ուժերը (ԻՊՈՒ), չունենալով բավարար միջոցներ. ա
այնտեղ պատասխան գործողությունների էին դիմում՝ վնասազերծելով ադրբեջանակ
ռազմական հենակետերը:

Այսպես՝ նոյեմբերի 31-ին հայ ազատամարտիկները ՀՀ պաշտպանության կոմիտե
Արցախ գործուղված Ա. Տեր-Թադևոսյանի՝ «Կոմանդոսի» գլխավորությամբ հանկարծակ
շնչառակի գրոհով ազատագրեցին Տող գյուղի ադրբեջանական մասը, ինչը մեծ ոգևորութ
առաջացրեց հայկական ուժերի մեջ: Գործողությունների նմանօրինակ արդյու
զարգացումը հուշեց, որ մոտալուտ արհավիրքներին դիմակայելու համար նորա
հանրապետությանն անհրաժեշտ է առանձին-առանձին գործող ֆիդայական ջոկատնե
ստեղծել մարտունակ բանակ[7]: Ու սկսեց գրվել մարտական փայլուն կենսագրության
առաջին էջը դարձան, հիմնականում, Հադրութի և Մարտունու շրջաններում ծավալ
մարտական գործողությունները, որոնց ընթացքում ճնշվեցին Հալիֆշա (6.11), Հախուլլու (7.11
Խոջավենդ (19.11) բնակավայրերի կրակակետերը, ազատագրվեցին Սարիշեն, Ծամձոր (15.11
Քարագլուխ (20.11) գյուղերը[8]:

Նոյեմբերից Ադրբեջանի կողմից լայնածավալ զինված ագրեսիա սկսվեց ԼՂՀ-ի
Առաջին անգամ խաղաղ բնակավայրերի վրա կիրառվեց միջազգային համաձայնագր
արգելված զանգվածային ոչնչացման զենք[9]: Նոյեմբերի 29-ին ռմբակոծվեցին Ստեփանակերտ
Ասկերան քաղաքները, Խնածախ, Հարավ, Շոշ, Ավդուռ և Մյուրիշեն գյուղերը՝ հանգեցն
բազմաթիվ զոհերի և ավերածությունների:

1991թ. նոյեմբերի 26-ին Ադրբեջանի ԳԽ-ն որոշում ընդունեց ԼՂԻՄ-ի լուծարման մաս
ԼՂԻՄ-ը վերացվում էր որպես ազգային-տարածքային կազմավորում, իսկ նրա շրջանների
բնակավայրերը անվանափոխվում և վերաենթարկեցվում էին նորաստեղծ վարչակ
կենտրոններին: Երկու օր անց՝ ԽՍՀՄ Սահմանադրական վերահսկողության կոմիտեն ընդու
որոշում Ադրբեջանի և Հայաստանի ԳԽ ակտերի վերաբերյալ: Սահմանադրակ
վերահսկողության կոմիտեն դատապարտեց ԼՂԻՄ-ը լուծարելու մասին Ադրբեջանի օրենս
մարմնի ակտը, որը խախտում էր ԽՍՀՄ սահմանադրության մեջ ամրագրված ԼՂԻՄ
կարգավիճակը: ԽՍՀՄ սահմանադրության խախտում համարվեց նաև Հայաստանի ԳԽ
«Հայկական ԽՍՀ-ի և ԼՂ-ի վերամիավորման մասին» որոշումը: Բայց ԼՂՀ-ի հռչակա
հակասահմանադրական չհամարվեց, ինչը փաստորեն նշանակում էր ԼՂՀ-ի իրավականության
և Ադրբեջանի կազմից նրա դուրս գալու իրավասության ճանաչում[10]:

Այնուամենայնիվ, տվյալ պարագայում Արցախի վիճակն ավելի ու ավելի էր ծանրանո
Բացի ռազմական ագրեսիայից, տնտեսական կացությունը ԼՂՀ-ում մնում էր անմխիթ
Հանրապետությունը գտնվում էր լրիվ շրջափակման մեջ: Նշենք, որ օգոստոսի 24-ից դադարեց
էին ինքնաթիռների թռիչքները Ստեփանակերտի օդանավակայանից, սեպտեմբերի
Ստեփանակերտի երկաթուղային կայարան մուտք չէր գործել ոչ մի շարժակազմ, վառել
բացակայության պատճառով սեպտեմբերի 19-ից չէին աշխատում Ստեփանակերտ
ավտոձեռնարկության ավտոմեքենաները, Ստեփանակերտում դադարեցվել
էլեկտրաէներգիայի մատակարարումը, խիստ վտանգի տակ էր նաև գազի մատակարարու

[illegible] իրեն զգացնել էր տալիս առաջին անհրաժեշտության ապրանքների պակասը[11]: Դրան զուգընթաց՝ նոյեմբերի վերջերից ամեն օր ռմբակոծվում էին ԼՂՀ բնակավայրերը, հատկապես՝ մայրաքաղաք Ստեփանակերտը: Ավերվեցին տասնյակ բնակելի շենքեր, պետական և հասարակական օբյեկտներ, այդ թվում՝ նախկին մարզկոմի և մարզխորհրդի շենքերը, կենտրոնական հեռագրատունը: Մարզխորհրդի և ԻՊՈՒ ղեկավարության հրահանգով կարգի էին բերում քաղաքի բնակելի, հասարակական շենքերի ներքնահարկերը՝ որպես ապաստարաններ[12]:

Տարածաշրջանում ռազմաքաղաքական մթնոլորտը ավելի շիկացնելու և մարտական գործողություններին նոր թափ հաղորդելու համար Ադրբեջանը որպես առիթ օգտագործեց ԼՂՀ-ում հանրաքվեի անցկացումը: Այսպես, դեկտեմբերի 10-ին՝ հանրաքվեի օրը, տարբեր զինատեսակների կիրառմամբ ուժգին հրետակոծվեցին Ստեփանակերտ քաղաքն ու հարակից բնակավայրերը: Զոհվեց 10 և վիրավորվեց 11 հայ խաղաղ բնակիչ[13]:

Հայկական ԻՊՈՒ-ի առաջ դրվեց առաջնահերթ խնդիր՝ վնասազերծել ռազմական խոշոր հենակետերի վերածված ադրբեջանական այն գյուղերը, որտեղից գնդակոծության և հրետակոծության տակ էին պահում Ստեփանակերտն ու հարակից բնակավայրերը:

Դեկտեմբերի 25-ին և 26-ին Արցախից դուրս բերվեցին նախկին ԽՍՀՄ-ի ներքին զորքերի ստորաբաժանումները, ինչի հետևանքով անպաշտպան մնացին ԼՂՀ-ի բազմաթիվ բնակավայրեր և ժողովրդատնտեսական կարևոր օբյեկտներ, իսկ սահմանագծի ողջ երկայնքով ուժեղացվեցին ադրբեջանական զինված ուժերի հարձակումները: Ադրբեջանցիների ակտիվությունը նաև պայմանավորված էր նրանով, որ հասցրել էին Արցախ տեղափոխել մեծ քանակությամբ զինված ստորաբաժանումներ: Ստեղծված իրադրությունում ինքնապաշտպանության պատասխանատուները խնդիր ունեին ուժեղացնել ժողտնտեսական օբյեկտների պաշտպանությունը՝ ներգրավելով խաղաղ բնակչությանը, ինչպես նաև ստեղծել առանձին ջոկատներ՝ հակառակորդի հետախուզական խմբերի ոչնչացման նպատակով: Տագնապալից իրավիճակի թելադրանքով Ա. Տեր-Թադևոսյանին հանձնարարվեց անհապաղ ավարտել զինված ստորաբաժանումների կազմավորումը: Հայ ազատամարտիկները ստիպված էին ներքին պայմանավորվածության հասնել ԽՍՀՄ ներքին զորքերի ստորաբաժանումների հրամանատարության հետ և նրանց դուրսբերման պահին առգրավել որոշակի քանակությամբ զենք և զինամթերք[14]:

ԼՂՀ-ի հռչակումից հետո սկսվեց նոր իշխանական կառույցների, առաջին հերթին՝ օրենսդիր մարմնի՝ ԳԽ-ի ձևավորման գործընթացը: Պետական և ռազմական շինարարության խնդիրները լուծվում էին զուգահեռաբար, չընդհատվող ռազմական գործողությունների պայմաններում: ԼՂՀ առաջին գումարման ԳԽ-ում, որը հետագայում անվանվեց ԼՂՀ խորհրդարան (այժմ՝ ԼՂՀ Ազգային ժողով), պետք է ընտրվեր 81 պատգամավոր: Ընտրությունների օր նշանակվեց 1991թ. դեկտեմբերի 28-ը: Ընտրությունների անցկացման կարգը քննարկվեց ԼՂՀ խորհրդի գործկոմի դեկտեմբերի 19-ի նիստում[15]: Կազմավորվեց 81 ընտրատարածք[16], այդ թվում նաև բոլոր ադրբեջանաբնակ վայրերում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ հաստատվեց Է. Պետրոսյանը:

Դեկտեմբերի 28-ին կայացան ԼՂՀ ԳԽ ընտրությունները, որոնք անցկացվեցին մեծամասնական ընտրակարգով՝ ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ:

Հանրապետության ԳԽ ընտրությունների մասին տեղյակ էին պահվել Շուշիի և ադրբեջանական մյուս բնակավայրերի բնակիչները: Ադրբեջանցիները կատարեցին Մութալիբովի հրամանը և չմասնակցեցին ընտրություններին, ինչպես որ չէին մասնակցել հանրաքվեին: Դրա փոխարեն, սակայն, ընտրությունները չանցան առանց ադրբեջանական կողմի «մասնակցության». նրա ուժգին հրետակոծությունների հետևանքով հանրապետությունում, մասնավորապես՝ Ստեփանակերտում, զոհվեց 17 խաղաղ հայ բնակիչ, ավերվեցին մեծ քանակությամբ բնակելի տներ, հանրապետական և մանկական հիվանդանոցները: Իսկ երեկոյան հակառակորդի զինված խմբավորումները հարձակում ձեռնարկեցին Շուշիի շրջանի Քարինտակ գյուղի ուղղությամբ: Գյուղի պաշտպանները, թեև մեծ դժվարությամբ, բայց կասեցրին թշնամու առաջխաղացումը[17]: Ի պատասխան, օգտվելով թշնամու թուլացումից, Կրկժանի մատույցներում (Ստեփանակերտ քաղաքի հարավարևմտյան թաղամաս, որտեղ բնակչության մեծ մասը ադրբեջանցիներ էին) գրոհ ձեռնարկելով, ԻՊ ջոկատները մտան Կրկժան: Հակառակորդը, ստիպված, Քարինտակի ուղղությունից ուժերը հանեց և կենտրոնացրեց Կրկժանում՝ պաշտպանություն բռնելով գյուղական դպրոցի շրջակայքում:

Այդ օրերին, երբ ստեղծված իրավիճակը կարող էր հանգեցնել լայնածավալ պատերազմի և ապակայունացնել տարածաշրջանը, ձեռնարկվեց հերթական խաղաղարարական ջանք. նորաստեղծ Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) երկրների ղեկավարները փորձեցին միջնորդի դեր կատարել հիմնախնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ: Դեկտեմբերի 30-ին Մինսկում հավաքված ԱՊՀ երկրների ղեկավարները, դիմելով Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարներին, կոչ արեցին Ղարաբաղի հիմնահարցը լուծելու համար օգտագործել բանակցությունները, սակայն Ա. Մութալիբովը չընդառաջեց կոչին և պահանջեց չմիջամտել Ադրբեջանի անկախ հանրապետության «ներքին» գործերին[18]:

ԼՂՀ ԳԽ ընտրություններից հետո, 1992 թ. հունվարի 6-ին Ստեփանակերտում, ադրբեջանական մարզկոմբինատի նիստերի դահլիճում, ընտրված 51 պատգամավորներից 48-ի մասնակցությամբ (ճանապարհները փակ լինելու պատճառով 3 պատգամավորներ չէին կարողացել ժամանել Ստեփանակերտ) և 80 դիտորդների ու լրագրողների ներկայությամբ, «Տերունական» եկեղեցու («Հայր մեր») աշխատանքն սկսեց ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանը: Այդ օրը ընդունվեց «ԼՂՀ պետական անկախության հռչակագիրը», ըստ որի՝ ԼՂՀ-ն հայտարարվում է անկախ պետություն, որի տարածքում պիտի գործեին ԼՂՀ Սահմանադրությունն ու օրենքները: Հռչակագրում այնուհետև ասված է, որ ԼՂՀ-ում ամբողջ իշխանությունը պատկանում է ժողովրդին, նրա տարածքում ապրող բոլոր բնակիչները հանդիսանում են հանրապետության քաղաքացիներ, հանրապետության տարածքում թույլատրվում է երկքաղաքացիություն, բոլոր քաղաքացիները գտնվում են ԼՂՀ-ի պաշտպանության տակ, երաշխավորվում են նրանց իրավունքներն ու ազատությունը՝ անկախ ազգային պատկանելությունից: Հանրապետության ամբողջ տարածքի նյութական և հոգևոր հարստությունները պատկանում են հանրապետությանը և նրա ժողովրդին: Հայրենիքը պաշտպանելու համար ստեղծվում են սեփական զինված ուժեր, և հանրապետության քաղաքացիները զինծառայություն են անցնում ԼՂՀ տարածքում: ԼՂՀ պետական լեզուն հայերենն է[19]:

Հանրապետության սահմանները պաշտպանելու և բնակչության անվտանգությունն ապահովելու համար հենց առաջին նիստում որոշվեց ստեղծել հանրապետության իշխանության բարձրագույն մարմիններին ենթակա սեփական ռազմական ուժեր, հասարակական կարգի պահպանության ու պետական անվտանգության մարմիններ և բոլոր ռազմական ուժերը միավորել մեկ հրամանատարության ներքո:

Հունվարի 7-ի նիստում պատգամավորները ձեռնամուխ եղան ԳԽ նախագահի ընտրության հարցի լուծմանը: Առաջադրվեցին 7 թեկնածուներ՝ Լ. Պետրոսյան, Օ. Եսայան, Ռ. Քոչարյան, Ա. Մկրտչյան, Լ. Մելիք-Շահնազարյան, Ա. Մանուչարյան և Շ. Մնացականյան: Թեկնածուներից հինգը ինքնաբացարկ հայտարարեցին, և մնացին Ա. Մկրտչյանն ու Պետրոսյանը: Մի քանի անգամ քվեարկություն կատարվելուց հետո 42 ձայնով ԼՂՀ ԳԽ առաջին նախագահ ընտրվեց ՀՅԴ անդամ, պատմական գիտությունների թեկնածու, 33-ամյա Արթուր Մկրտչյանը[20]: Ստեղծվեց նաև Նախարարների խորհուրդ (ՆԽ), որի նախագահ հաստատվեց Օլեգ Եսայանը, իսկ տեղակալ՝ Բ. Առուշանյանը[21]: Ընտրված պատգամավորների մեծամասնությունը ՀՅԴ անդամներ էին, և, ԳԽ նախագահի ընտրություններում հաղթանակ տանելով, ՀՅԴ-ն որոշում ընդունեց երկրում ներքաղաքական կայունությունը պահպանելու նպատակով մի շարք կարևոր ղեկավար պաշտոններ, այդ թվում ՆԽ նախագահինը, հանձնել մյուս քաղաքական ուժերին: ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանի առաջարկով, ԼՂՀ ԳԽ նախագահի առաջին տեղակալի պաշտոնի համար առաջադրվեց Ռ. Քոչարյանի թեկնածությունը, սակայն գաղտնի քվեարկության ժամանակ թեկնածուն անհրաժեշտ քվեներ չստացավ: Նախագահի առաջին տեղակալի պաշտոնը մնաց թափուր: Մինչև ԳԽ քարտուղարի ընտրությունները վերջինիս պարտականությունները դրվեցին Հ. Գրիգորյանի վրա:

ԼՂՀ ԳԽ առաջին նստաշրջանը կոչով դիմեց ՄԱԿ-ին, աշխարհի բոլոր պետություններին, ԱՊՀ երկրներին՝ խնդրելով ճանաչել ԼՂՀ-ն, նրան օգնություն ցույց տալ և կանխել արցախահայության ցեղասպանությունը:

Նստաշրջանի աշխատանքում հայտարարվեց ընդմիջում, և աշխատանքները շարունակվեցին հունվարի 17-20-ը:

Հունվարի 11-ին տեղի ունեցան ԼՂՀ ԳԽ պատգամավորների լրացուցիչ ընտրությունները, և թափուր տեղերի համար ընտրվեց 9 պատգամավոր, որոնց իրավունքները հաստատվեցին ԳԽ նստաշրջանի հունվարի 17-ի նիստում: Նույն օրը ԼՂՀ ԳԽ նախագահի տեղակալ ընտրվեց ՀՅԴ անդամ Գ. Պետրոսյանը, քարտուղար՝ պատմական գիտությունների թեկնածու, անկուսակցական Վ. Հակոբյանը[22]:

ԳԽ նստաշրջանն ընդունեց «Արտակարգ դրության մասին» օրենքը: Ապա կազմավորվեցին ԳԽ մշտական հանձնաժողովները: Մանդատային, պարկեշտության, մարդու իրավունքների և ազգությունների հանձնաժողովի նախագահ ընտրվեց Հ.Խաչատրյանը, ագրարային հարցերի և տնտեսական կյանքի մշտական հանձնաժողովի նախագահ՝ Վ. Ալեքսանյանը, գիտության, կրթության, լեզվի, մշակույթի և լրատվական հանձնաժողովի նախագահ՝ Հ. Գրիգորյանը, առողջապահության, սպորտի, սոցիալական հարցերի, բնապահպանության հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աղաբալյանը, ֆինանսավարկային և բյուջետային հանձնաժողովի նախագահ՝ Վ. Ղազարյանը, արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ՝ Լ. Մելիք-Շահնազարյանը, պաշտպանության և անվտանգության հանձնաժողովի նախագահ՝ Վ. Բալայանը, պետական շինարարության, իրավական հարցերի և օրինականության ամրապնդման հանձնաժողովի նախագահ՝ Կ. Բաբուրյանը: ԳԽ մշտական հանձնաժողովները մինչև ՆԽ-ի լրիվ կազմավորումը իրենց վրա վերցրին նաև ՆԽ-ի մի շարք լիազորություններ:

Այսպիսով՝ արդբեջանական ագրեսիայի պայմաններում ԼՂ-ում պետական շինարարության գործընթացը, հաղթահարելով իր ճանապարհին ծագած վայրիվերումները, անցնելով միջազգային ասպարեզում հարուցված դիվանագիտական խաչընդոտները, ապացուցեց իր շարունակական լինելու իրավունքը և ԼՂՀ-ում ժողովրդավարական աշխարհի կառուցման ու կայացման ուղղույթ վերցրեց:

*Գրականություն*


1. Арутюнян В., События в Нагорном Карабахе, хроника часть IV, январь 1993-июль, Ереван, 1997, с. 26 (այսուհետև՝ Հարությունյան Վ.):
2. Նույն տեղում, էջ 73:
3. Բալայան Տ., Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994թթ., Երևան, 2004, էջ 24:
4. Յարությունյան Վ., նշվ. աշխ., 81-83:
5. http://www.nkr.am/arm/history/voina.htm.
6. Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 88:
7. Բալայան Վ., Արցախի պատմություն, հնագույն մինչև մեր օրերը, Երևան, 2002, էջ 366:
8. Հարությունյան Մ., Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994թթ., պատմական գիտությունների թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2001, էջ 33, (տես՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարան):
9. Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 365:
10. Манасян А., Карабахский конфликт. Ракурсы правового подхода, Ереван, 1997 с. 107-111.
11. Աբրահամյան Հ., Ճակատագրին ընդառաջ, Երևան, 2001, էջ144:
12. Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 93:
13. Օհանջանյան Մ., Անկախության քայլերը. ԼՂՀ-ում անցկացված հանրաքվեն և ընտրությունները (1991-1998թթ.), Ստեփանակերտ, 1998, էջ 8:
14. Т. де Ваал, Черный сад. Армения и Азербайджан между миром и войной, Москва, 2005, с. 228.
15. Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 147:
16. Օհանջանյան Մ., նշվ.աշխ., էջ 12:
17. Հարությունյան Մ., նշվ. աշխ., էջ 34:
18. Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 150:
19. Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 109:
20. Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 151-152:
21. Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 107:
22. Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 152:



*Резюме*

После провозглашения независимости НКР начался процесс формирования органов власти. Вопросы государственного и военного строительства решались параллельно в условиях непрекращающихся военных действий. Несмотря на тяжелую военно-политическую ситуацию, формирование новой власти прошло в соответствии с международными демократическими нормами.